# ԱՅԺՄ ՄԻԱՅՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ

—

Հայ մամուլի գրեթէ բոլոր օրգանները, նոյնիսկ դէպի Օրմանեան արքեպիսկոպոսը թշնամաբար վերաբերուող «Հօրիզօն» թերթը, արտատպեցին այդ նշանաւոր գիտնական եկեղեցականի յօդուածը, տպված Կ. Պօլսի «Բիւզանդիոն» թերթում, որով առաջարկում է հայ գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի ազգային մեծ յոբելեանը յաւերժացնել՝ հիմնելով Հայկական Ինստիտուտ, նման եւրոպական ինստիտուտներին, և առաջարկում է հիմնել այդ Ինստիտուտը Եգիպտոսում, իբրև ամենից շատ յարմարութիւններ ունեցող կենտրոնավայրում, թէև խոստովանում է, որ յարմարագոյն վայրը կը լինէր Էջմիածինը։

Սակայն, ըստ էութեան, մենք ոչ Օրմանեան սրբազանի գաղափարին ենք դէմ, ոչ նրա առաջարկած վայրին. այլ պարտք ենք համարում առարկել նրա առաջարկի դէմ, իբրև անժամանակ և ներկայումս աննպատակայարմար մի առաջարկի, որ կարող է եթէ ոչ խոչընդոտ հանդիսանալ այն մեծ ակտի իրագործման, որով որոշված է յաւերժացնել համազգային մեծ տօնը, այն է՝ դպրոցական ֆոնդի իրագործման, գոնէ թուլացնել նրա ոյժը։

Եւ նոյն պատճառները, որոնց հիման վրա մենք դէմ ենք գրական ֆոնդ հիմնելու առաջարկին, դրդում են մեզ այսօր դէմ լինելու և Օրմանեան սրբազանի առաջարկին, ոչ ըստ էութեան, այլ ըստ ձևի և աննպատակայարմարութեան։

Բոլոր երեք առաջարկների մէջ, որոնք այժմ հրապարակի վրա են դըրված, այն է՝ դպրոցական ֆոնդ, գրական ֆոնդ և Հայկական Ինստիտուտ, մենք առաջնութիւնը կը տայինք վերջինին, եթէ միայն նա դրված լինէր իր ժամանակին, որովհետև Հայկական Ինստիտուտը ծրագրվում է իբրև մի համազգային հիմնարկութիւն և արժանի է, որ նրանով յաւերժանայ համազգային մեծ տօնը։ Դժբաղդաբար Օրմանեան սրբազան իր առաջարկը արել է շատ անագան, երբ արդէն դպրոցական ֆոնդն ընդհանուր հաւանութիւն և ընդունելութիւն է գտել և մտել իրագործման շաւղի մէջ։

Եւ քանի որ դպրոցական ֆոնդը արդէն սկսված է, պէտք է այժմ փարել նրան և ուրիշ որևէ առաջարկ հրապարակ չը հանել, այլ ամեն կերպ աջակցել նրա իրագործման։ Դպրոցական ֆոնդն էլ այնպէս, ինչպէս մենք էինք ծրագրում, համազգային մի հիմնարկութիւն է, որ պէտք է գոհացում տայ մի համազգային կարիքի՝ տգիտութեան փարատման։

Եւ դպրոցական ֆոնդին առաջնութիւն պէտք է տալ գրական ֆոնդից, որովհետև առաջ դպրոց, յետոյ գրականութիւն. առաջ գրագիտութիւն, յետոյ գրականութեան զարգացում։ Իսկ այն ձևով, որով ծրագրվում է գրական ֆոնդը Թիֆլիսի Հայ Գրողների Ընկերութեան կողմից, միանգամայն անընդունելի է մեզ համար, որովհետև նա բնաւ համազգային բնոյթ չէ կրում, այլ պէտք է ծառայէ մի քանի կարօտեալ գրողների, այն էլ ռուսահայ գրողների նպաստման, ուրեմն մի մասնաւոր կարիքի, որին շատ լաւ գոհացում կարող է տալ և ինքը Գրողների Ընկերութիւնը իր սեփական միջոցներով։ Գրական ֆոնդ ասելով մենք հասկանում ենք մի ֆոնդ, որ պէտք է նպաստէ, զարկ տայ ընդհանուր հայկական գրականութեան թէ արևելեան և թէ արևմտեան—բարգաւաճման։

Բայց դրա հերթն էլ կը գայ, ինչպէս ճիշդ նկատեց Գր. Զալխուշեանը։ Երբ դպրոցական ֆոնդը իրագործվի, անշուշտ, կը դրվեն հրապարակի վրա և Հայկական Ինստիտուտի և գրական ֆոնդի առաջարկները։ Առիթներ չեն պակասի։

Իսկ այժմ պէտք է ոյժ տալ միայն դպրոցական ֆոնդին և աշխատել իրագործել այն։

Դպրոցական ֆոնդ ասելով՝ մենք հասկանում ենք համազգային դպրոցական ֆոնդ, ինչպէս և ծրագրված էր սկզբից։ Թող թիւրքահայերն էլ մասնակցեն այդ ֆոնդին և օգտվեն նրանից ապագայում։

Հ. Առաքելեան